ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/221

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/10033-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 30.05.2022թ. թիվ 1/5-35-22 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/10033-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/221 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

3. <u>«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.05.2022թ. թիվ 1/5-35-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով տեղեկացնում ենք, որ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ-22/1 պայմանագիրը 26.05.2022թ. միակողմանի լուծվել է՝ մատակարարի կողմից պայմանագիրը էականորեն խախտելու հիմքով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված կարգով կատարվել է պատշաճ ծանուցում: «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով կից ներկայացվում է «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի զեկուցագրերի, ընկերությանը կատարված նախազգուշացման, ծանուցման և պայմանագրի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/221 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 23.12.2022թ. կնքվել է թիվ «ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են մեկ օրից ավելի:

3. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքների մատակարարման ժամկետը կսահմանվի ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ համաձայնագրով:

4. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 31.01.2022թ. կնքվել է Համաձայնագիր, որի 1-ին կետի 1.1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն համաձայանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

5. Համաձայնագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 10.01.2022թ-ից մինչև 25.12.2022թ.: Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի բացառապես պատվերի առկայության դեպքում:

6. Պատվիրատուն «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2022թ. թիվ 1/5-31-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված թիվ ԵՊՊՔ-ԳՀԱ-ՁԲ-22/1 պայմանագրի համաձայն /այսուհետ Պայմանագիր/ Ձեր ընկերությունը մինչև սույն թվականի մայիսի 21-ը պետք է մատակարարեր պանիր Լոռի» 6 կգ: 23.05.2022թ. Ձեր ընկերությանը գրավոր

զգուշացվել է, որ մեկ օրվա ընթացքում կատարեն վերը նշված ապրանքի մատակարարումը, որը առ 25.05.2022թ. չի կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջը՝ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ ՊՈԱԿ-ը չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին պարտավոր է փոխանցել 29.1 /քսանինն ամբողջ մեկ տասնորդական/ ՀՀ դրամ տույժ' Պայմանագրի 6.2 կետի համաձայն, 291 /երկու հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ տուգանք' Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր՝ հավելված 4.2 և հավելված 5.1/, համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.4 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/10033-2022 գրությունը, «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 30.05.2022թ. թիվ 1/5-35-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ

մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 23.12.2022թ. կնքվել է թիվ «ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված

կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են մեկ օրից ավելի:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքների մատակարարման ժամկետը կսահմանվի ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ համաձայնագրով:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 31.01.2022թ. կնքվել է Համաձայնագիր, որի 1-ին կետի 1.1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայնագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 10.01.2022թ.-ից մինչև 25.12.2022թ.: Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի բացառապես պատվերի առկայության դեպքում:

Պատվիրատուն «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված 23.05.2022թ. թիվ 39/02-07-254 գրությամբ հայտնել է հետևյալը.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված թիվ ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ- 22/1 պայմանագրի 2.1.1 կետով սահմանված է ապրանքի մատակարարման ժամկետի խախտման հնարավոր թույլատրելի օրերի թիվը /տվյալ դեպքում մեկ օր/, իսկ նույն պայմանագրի 2.1.7 կետով սահմանված է պայմանագիրը միակողմանի լուծելու պայմանը: 21.05.2022թ. Ձեր ընկերությունը պետք է մատակարարեր պանիր լոռի՝ 6 կգ:

Ձեր կողմից վերը նշված ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է մեկ օրով: Խնդրում ենք մեկ օրվա ընթացքում մատակարարել պատվիրված սննդամթերքը, հակառակ դեպքում պայմանագիրը կլուծվի վերը թվարկված չափաբաժնով:

Պատվիրատուն «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2022թ. թիվ 1/5-31-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված թիվ ԵՊՊՔ-ԳՀԱ-ՁԲ-22/1 պայմանագրի համաձայն /այսուհետ Պայմանագիր/ Ձեր ընկերությունը մինչև սույն թվականի մայիսի 21-ը պետք է մատակարարեր պանիր Լոռի» 6 կգ: 23.05.2022թ. Ձեր ընկերությանը գրավոր զգուշացվել է, որ մեկ օրվա ընթացքում կատարեն վերը նշված ապրանքի մատակարարումը, որը առ 25.05.2022թ. չի կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջը՝ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ ՊՈԱԿ-ը չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին պարտավոր է փոխանցել 29.1 /քսանինն ամբողջ մեկ տասնորդական/ ՀՀ դրամ տույժ' Պայմանագրի 6.2 կետի համաձայն, 291 /երկու հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ տուգանք' Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր՝ հավելված 4.2 և հավելված 5.1/, համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.4 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե ***<u>մատակարարման ժամկետները խախտվել են մեկ օրից ավելի</u>***:

Նույն կետի 2.1.7-րդ ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>մեկ օրից ավելի</u>***:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն խախտել է իր և «Երևանի պարարվեստի պետական քոլեջ ՊՈԱԿ-ը միջև 23.12.2021թ. կնքված թիվ «ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ-22/1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/10033-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ղահրաման» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**